ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի* գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 19.01.2026թ.
ժամը 16:00
ավարտ՝ 23.02.2026թ.
ժամը 17:00

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ	Նորիկ Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման աշխատանքների համակարգման բաժնի ճանապարհների պահպանման աշխատանքների տարածքային ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Կարապետ Հյուսիսյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման աշխատանքների համակարգման բաժնի ճանապարհների պահպանման աշխատանքների համակարգող տարածքային ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Վահրամ Նորեկյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Լաուրա Գևորգյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման աշխատանքների համակարգման բաժնի ճանապարհների պահպանման աշխատանքների տարածքային ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Թադևոս Կիլիչյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Զանուշ Հայրապետյան

«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների գնման գնի վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին:
3. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
4. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:
5. Տվյալներ՝ Կարգի 67-րդ կետի հիման վրա ստացված տեղեկությունների մասին:

* Սույն գնումն իրականացվում է համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի, 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի:

6. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների գնման գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գնման գինը.

Չափաբաժնի		*Չափաբաժնի անվանումը*
համարը	*գնման գինը*	
1	203 953 999 / մեկ տարվա համար/	**ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ներառյալ այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ**

2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1 Ընթացակարգի հայտերը Armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով բացվել են հրավերով սահմանված ժամկետում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ **2026 թվականի հունվարի 19-ին, ժամը 16:00-ին:**

3. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

3.1 Սահմանված կարգով ներկայացված հայտերը, որենք ընդունվել են Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի 3-ն են:

3.2 Ընթացակարգի շրջանակներում հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները՝

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«ԹԻ ԷՄ ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	Երևան, Ազատության պող. 2, 49բն.	06001677	tmmconstruction2026@gmail.com Հեռ. 077 084 737
2	«ԷՅԷՆ ՓՐՈԴԱՔԹՍ» ՍՊԸ	Ք.Երևան 12 բն 21	01046849	accont77@bk.ru Հեռ. 093 536 144
3	«Քյավառ սերվիս» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի, ք. Գավառ, Ազատության 41/5	08420926	qyavar.servis@mail.ru Հեռ. 094 067 057

4. Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:

4.1 ՀՀ ֆինանսների նախարարության www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված տեղեկատվության համաձայն «ԷՅԷՆ ՓՐՈԴԱՔԹՍ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ 01046849) 2025 թվականի սեպտեմբերի 6-ից մինչև 2027 թվականի սեպտեմբերի 6-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: («ԷՅԷՆ ՓՐՈԴԱՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ՀՎՀՀ-ն (01046840) չի համապատասխանում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված «ԷՅԷՆ ՓՐՈԴԱՔԹՍ» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ին (01046849)): «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ԷՅԷՆ ՓՐՈԴԱՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

4.2 «Քյավառ սերվիս» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են Հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

4.3 «ԹԻ ԷՄ ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են: Հիմք ընդունելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից ս.թ. փետրվարի 4-ին ստացված թիվ 7/15/28530-26 գրությունը գնահատող հանձնաժողովը որոշեց ղեկավարվելով Կարգի 67-րդ կետի դրույթներով ստուգել «ԹԻ ԷՄ ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը:

4.4 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել իրավասու մարմնի կողմից գրավոր եզրակացություն ստանալու օրվան հաջորդող 2-րդ աշխատանքային օրվա ժամը 16:30-ին:

Որոշումն ընդունվել է՝ կողմ- 5 դեմ-0

23.02.2026թ., ժամը 16:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

5. Տվյալներ՝ Կարգի 67-րդ կետի հիման վրա ստացված եզրակացության մասին

5.1 Հանձնաժողովը ուսումնասիրեց իրավասու մարմնի կողմից տրված գրավոր եզրակացությունը:

4. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

4.1 Ընթացակարգի շրջանակներում յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը.

Չափաբաժին 1: ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ներառյալ այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	«ԹԻ ԷՄ ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	141 060 000 (մեկ հարյուր քառասունմեկ միլիոն վաթսուն հազար)	28 212 000 (քսանութ միլիոն երկու հարյուր տասներկու հազար)	169 272 000 (մեկ հարյուր վաթսունինը միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար)
2	«Քյավառ սերվիս» ՍՊԸ	169 606 500 (մեկ հարյուր վաթսունինը միլիոն վեց հարյուր վեց հազար հինգ հարյուր)	33 921 300 (երեսուներեք միլիոն ինը հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր)	203 527 800 (երկու հարյուր երեք միլիոն հինգ հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր)
Մերժված հայտ				
-	«ԷՅԷՆ ՓՐՈԴԱՔԹՍ ՍՊԸ	125 000 000 (մեկ հարյուր քսանհինգ միլիոն)	25 000 000 (քսանհինգ միլիոն)	150 000 000 (մեկ հարյուր հիսուն միլիոն)

4.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

7.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ 05.01.2026թ. ստացվել է հարցում, որի վերաբերյալ 07.01.2026թ. տրամադրվել է պարզաբանում:

7.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

8.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով՝ «ԷՅԷՆ ՓՐՈԴԱՔԹՍ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթները:

8.2 Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց և հայտարարեց ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին՝

- ընտրված մասնակից՝ «ԹԻ ԷՄ ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
- այդպիսին չճանաչված մասնակից՝ «Քյավառ սերվիս» ՍՊԸ

8.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

8.4 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.5 Հիմք ընդունելով Ընթացակարգի Հրավերով սահմանված պայմանը՝ մինչև պայմանագիր կնքելը, ընտրված մասնակցին ներկայացնել Հրավերով սահմանված մեքենա-սարքավորումների նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու պահանջ:

8.6 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Ընտրված մասնակցի կողմից Հրավերով սահմանված փաստաթղթերի ներկայացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին:

Որոշումն ընդունվել է՝ կողմ- 5 դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Նորիկ Մնոյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Կարապետ Հյուսիսյան**	.....
	Վահրամ Նորեկյան	.....
	Լաուրա Գևորգյան	.....
	Թադևոս Կիլիչյան	.....
Քարտուղար՝	**Զանուշ Հայրապետյան**	.....